

Այս անօթը երկար ժամանակ նկատուած է իբր զըմբուխտ, բայց հոգաբարձուն որ անոր մասին յարգանք ունենալէ հետու կը թուէր, ըսած է թէ խերսցիկները գիտեն թէ ասիկա ապակի է: Կը կարծուի թէ այն կտորը որ կը պակսի՝ Բարիզի մէջ վերլուծուած է և նոյն ժամանակէն սկսեալ հասկցուած է անոր նիւթը, որովհետև ապակիի գիւտը Քրիստոսէ առաջ է. այս վերլուծումը չպիտի կրնայ հերքել կարծիքը անոնց որ կը հաւատան թէ այս սկիհը գործածուած է Ս. Ընթրեաց ժամանակ: Այս աւանդութիւնը թէև չկրնար ունենալ պատմական յիշատակարան մը, բայց գոնէ ան շատ նշանաւոր է (Mis. Բ. հատ. էջ 109-110):

բ) Կուռնկիոս հարիւրապետ և Փիլիպպոս սարկաւազ. — Կեսարիա հեթանոսներու առաջին քաղաքն է որ լուսաւորուած է հաւատքի լոյսով յանձին Կուռնկիոս հարիւրապետին որ ծնունդով հռոմայեցի էր և իտալական գօրագունդի մը գլուխը կը գտնուէր: Հրեշտակին ազգարարութեան վրայ փնտռել տուաւ Ս. Պետրոսը որ Յոպպէէն գալով մկրտեց զանիկա իր ազգականներուն հետ (Գործք. Ժ.): Կուռնկիոս յաջորդեց Չաքէոսին՝ որ է այս քաղաքին առաջին եպիսկոպոսը: Յերոնիմոսի ժամանակ տակաւին կը տեսնուէր անոր տունը՝ որ եկեղեցիի փոխուած էր: Անտոնիոսի Ուղեգութեան համաձայն, այն բաղնիքները զոր Կուռնկիոս շինել տուած էր, կը մնային մինչեւ 333 թուականը:

Փիլիպպոս սարկաւազ Կեսարիա եկաւ Եթովպիոյ թագուհիին գանձերու պահապանը մկրտելէ յետոյ (Գործք. Ը. 40): Հոն էր իր բնակարանը: Անոր չորս աղջիկները հոն կ'ապրէին աղօթքով և կուսութեամբ: